

Ա. Զ. Դ. Ա. Յ. Ի. Ն.



ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԺ ԷԿԵԿԵՍԻ Ի ՏԷԲ.

Ահա այն տխուր գոյժը, որ հնչում է և արժարժվում թէ լրագրութեան մէջ և թէ հասարակութեան բերանում:

Արարատի անցեալ Հոկտեմբերի տետրակը պատրաստ էր ուղարկուելու բաժանորդներին՝ երբ բոթարքը լուրը հեռագրով Ա. Էջմիածին հասաւ, և խմբագրութիւնը հարկ անհրաժեշտ համարեց յետաձգել թերթի հրատարակութիւնը մինչև պատրաստելը այն կիսաթերթի, որ ընթերցողները տեսան արդէն Արարատի հետ ուղարկուած: Այդ կիսաթերթը իւր մէջ բովանդակում է Հանգուցեալ Պատրիարքի մահը գուժող լուրը և Ամենապատիւ Տեղակալ Հօր ու Կ. Պօլսոյ Կենդրոնական Կրօնական Ժողովոյ Ատենապետի միջև փոխանակեալ հեռագիրների հայերէն թարգմանութիւնները:

Հանգուցեալ Ներսէս Պատրիարքի արժանիքը գնահատելու և նորա մահուան տխուր տպաւորութեան պատճառները հասկանալու համար գինեք այստեղ նորա կենաւորութեան վերաբերեալ այն մի քանի համառօտ տեւելու թիւնները՝ որ այժմ յեղյեղվում են:

Հանգուցեալ Ներսէս պատրիարք ծնուել է 1837 թուին Յունվարի 28-ին Կ. Պօլսոյ Խաս-գիւղ կոչուած արուարձանում, ուսել է Խաս-գիւղի հոգևոր դպրոցում. իւր ուսածը կատարելագործել ինքնակրթութեամբ և ինչպէս հաւատարմ աղբիւրից գիտենք, իւր բարերար Ագրիանուպօլսոյ Հանգուցեալ Արիստակէս եպիսկոպոսի խնամքով յատուկ ուսուցիչների մօտ. մի առ ժամանակ ուսուցչութեամբ է պարապել և իւր կնոջ վաղահաս մահից յետոյ 1858 թուին Ագրիանուպօլսում Արիստակէս եպիսկոպոսի ձեռնադրութեամբ փարգապետական կոչումն է ընդունել, որով իւր առաջ բայուած ընդարձակ ասպարիզում վայելում էր ճարտարախօս քարոզչի և ճարպիկ ու եռանդուն դարձողի համբաւ և համարում: Այս գովելի յատկութիւնները գնա-

Հատելով Պօլսոյ Ազգային Վարչութիւնը՝ յանձնուէր Ներսէսին կարեւոր պաշտօններ, որոնց մէջ միշտ փայլումէր Նախահայկանութեամբ և պատուարներ գործունէութեամբ: Այսպէս Նառարիկունց Նշիպատս՝ տեղւոյն ազգայնոց խնճհալ գործերը քննելու և կարգի գնելու համար, Նուրար-Նահազարեան դպրոցի հաստատութեան և շարունակութեան գործում ազգեցիկ զերկատարեց և 1862 թուին ուղարկուած լինելով Զէյթուն, ընդ մէջ տեղւոյն Հայոց և Մարաշի Փաշայի ծագած խռովութեանցը վերահասու լինելու, հանդիպելով Սիս, Կլիկիոյ Կիրակոս Կաթողիկոսից եպիսկոպոս ձեռնադրուեց: 1866 թուին եկաւ Մայր Աթոռ, Հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսի մահից յետոյ, Հանգուցեալ Քէորդ Կաթողիկոսի ընտրութեանը իբրեւ Տաճկահայոց հոգևորականութեան ներկայացուցիչ՝ մասնակցելու: Նա իբրեւ Նիկոմիդիոյ վիճակի առաջնորդ, իւր ազգաշահ գործունէութեամբ փայլումէր իւր հօտի սէրն ու համակրութիւնը և ուրիշների յարգանքը, երբ Սամաթիոյ եկեղեցու հրկիզութեան համար 1873 թ. եկաւ Ա. Էջմիածին. ժողովարարութեան արտօնութիւն ստանալու՝ այդ իսկ ժամանակ հանգուցեալ Քէորդ Գ. Կաթողիկոսից Մայր Աթոռոյս միաբանակցութեան և եպիսկոպոսութեան արտօնութիւնը ստացաւ: Ռուսաստանից վերադառնալուց յետոյ Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեանի տեղ 1874 թ. ընտրուեց պատրիարք Հայոց Կ. Պօլսի:

Ներսէսը պատրիարքական պաշտօնը վարելիս՝ իբրեւ փորձառու մարդ՝ ամեն ջանք գործ էր դնում հանգամանքից օգուտ քաղել իւր հօտի բարօրութեան համար. Նորա պատրիարքութեան օրով, Նորա անունը փառաւորեցնող հանգամանքներից գլխաւորն էր վերջին Ռուս-Տաճկական պատերազմը, որի ղինադուլի ժամանակ բողոքունեցաւ Մեծ Իշխան Աւագն Նիկօլայ Նիկոյայելիի բարեհաճութեամբ Սան-Ստեփանոյի գաշնադրի 16-որդ յօդուածովը Տաճկահայաստանի բարենորոգութեան հիմը գնել. այդ հիման վերայ Բերլինի Աւագաժողովի գաշնադրութեան մէջ ընդ հսկողութեամբ մեծ պետութեանց Հայաբնակ գաւառների բարենորոգման 61-որդ յօդուածը հաստատել տալու համար՝ եւրոպական արքունիքը գթութիւն հայցելու երկու արքեպիսկոպոսներ ուղարկելուց յետոյ, հայաբնակ գաւառների Հայոց թիւը և նոցա կարիքը իմանալու համար էլ երկու վարդապետներ ուղարկեց, մինը Բարձր—

Հայք, իսկ միւսը Ստորին և Արեւմտեան Հայք՝ վիճակագրութիւն կազմելու:

Արշափ և ազգը ուրախ էր տեսնելով Ներսէսին պատրիարքական իշխանութիւնը յաջողութեամբ վարելիս, բայց և տառամոլութեան մէջ էր տեսնելով Ներսէսին մշտապէս Հիւանդութեամբ տառապեալ՝ հրաժարական ի ձեռին պատրաստ, մանաւանդ երբ լինումէին փոքր ինչ վրդովեցուցիչ միջնադէպեր, որոնք վատաւոյժ և գիւրդազած Պատրիարքին ի բարկութիւն և ի զայրոյթ էին գրգռում:

Ազգը երկար ժամանակ չէր կամենում ընդունել Հիւանդութեամբ պարտաւեալ, բայց սիրելի Պատրիարքի հրաժարականը, բայց երբ ուր ուրեմն ընդունեց՝ այն ժամանակ էլ, ի զարմանս ընտրի տեսաւ թէ Սուլթանը կամենումէ որ իւր սիրելին Ներսէս մնայ պատրիարք իւր հաւատարիմ հպատակ հայ ազգին: Ներսէս պարտաւորուած էր խնարհել երկրի վեհապետի կամքին, իսկ ազգը տեսնելով պատրիարքական աթոռի վերայ իւր սիրեցեալ անձին՝ առ վայր մի մոռացաւ թէ, հրաժարականը ընդունուած անձի՝ Սուլթանի հրամանով նորից պաշտօն վարելը, հակառակ է ազգային իրաւանց: Եւ այսպէս Ներսէս 1882 թուի Նոյեմբեր ամսին նորից ստանձնելով պատրիարքական իշխանութիւնը՝ հոգ կալաւ տեղւոյն հոգեւորական դասու մտաւոր զարգացման համար տեղ և ուսուցիչ նշանակելով ուսուցանելու որոյ հարկն էր, մի և նոյն ժամանակ զբաղւում և զբաղեցնումէր մի կենդրոնական դպրոցի հոգսով և պատրիարքարանի դրամական անեախանձելի գրութիւնը բարւոքելու խորհրդածութեամբ: Երկրի Վեհապետը ի նշան իւր առանձին բարեհաճութեան՝ Ներսէսին վարձատրեց, ի միջի այլոց, ընծայելով մի հոյակապ շքեղ տուն. իսկ ազգը մատուցեց նորան իւր ամենամեծ յարգանքը իմանալով հանդերձ նորա տկարութիւնը — տարւոյս Մայիսի Վաթուղիկոսական ընտրութեան ժամանակ ձայնից բաղմութեամբ առաջին ընտրեալ կացուցանելով, որից, ի ցաւ սրտի ամենայն Հայոց, հրաժարուեց Ներսէս իւր անձին գրութիւնը ի նկատի ունենալով:

Ներսէս պատրիարք, առաջին ընտրեալն ի Վաթուղիկոսութիւն, օժտեալն ազգի սիրով, երկրի վեհապետի առանձնաշնորհութեամբ ու բարեհաճութեամբ և օտարազգեաց յարգանք՝ չրկարողանալով այլ ևս առկալ իւր կենսամաշ տկարութեան՝ ընտրութիւնից մի

քանի շաբաթ յետոյ պարտաւորուեց մահճի մէջ զիւր գտնել: Հմուտ բժիշկներ դարմանումէին Նորան, և կարծես հիւանդութեան ճգնաժամը անցել էր և ահա տարւոյս Հոկտեմբերի 15-ին յանուն Երեսփոխանական ժողովոյ Ատենապետի ուղղեալ մի գրութեամբ շնորհակալութիւն յայտնելով այն ամեն մօրզոյ, որոնց հետ յարաբերութիւն էր ունեցել՝ խնդրումէ ընդ միշտ հրաժարեալ համարել իրան և նոր պատրիարք ընտրելու հոգսը անել:

Պատրիարքի այս գրութիւնը ընդունելուց յետոյ, երբ յուզիւմ էր պատրիարքական տեղապահի ընտրութեան խնդրը, և տեսնելով հիւանդ պատրիարքի հետզհետէ ապաքինութիւնը երբ ձեռնհաս մարդիկ աշխատումէին օրինաւոր կենսաթոշակ սահմանել տալ, որով և զիւրացնել Պատրիարքի Եւքապա գնալը բժշկուելու, որին բարեհաճ էր նաև Սգոստափառ Սուլթանը, յանկարծ, Հոկտեմբերի 26-ին յետ ճաշու 3 ժամին, մտնելով հիւանդ Պատրիարքի ննջարանը, Նորան վախճանած են գտնում. Նորան՝ որ նախընթաց երեկոյեան խորհրդածելիս է եղել Աղզային Վարչութեան Ատենապետի հետ, և որ, թէև երեւումէր իբրև մի հաստարմատ կաշնի սակաւ ինչ գրգռեալ՝ սակայն դեռ կայուն մնալու գրութիւն ընծայող: Մահուան գոյժը ճնշող տատամսութեամբ իւր ախուր թեւերը սկսումէ տարածել զանազան կողմեր. և պատրիարքական գլորոցները կնքելու համար շտապումեն Պատրիարքական Փոխանորդ Արժ. Տ. Գէորգ Ծ. վարդապետ Ռուսնուգլեան, Քաղաքական ժողովոյ Ատենապետ Մեծ. Պ. Սիմօն Մաքսուտ-Բէյ և Կրօնական ժողովոյ Ատենապետ Գեր. Տ. Խորէն Արքազան Արքեպիսկոպոս՝ որ յանուն Ամենապատիւ Տեղակալի Սինօդի Մայր Աթոռոյս գլխումէ հեռագրով վախճանած Պատրիարքի մահը: Այդ գոյժը խորին տրամութիւն ազդեց միաբանութեանս՝ որ ամոռոյս 4-ին Ս. Պատարագ մատուցանելով՝ հանգստեան պաշտամամբ խնդրեց յԱտուծոյ հանգիստ և երկնից սուրբ արքայութիւն Հանգուցելոյն ի տրիտուր վաստակոյ Նորին:

Ճեմարանի Վարչութիւնն ևս ի ներկայութեան ուսուցչաց և աշակերտաց՝ Հանգուցեալ Պատրիարքի հոգւոյ փրկութեան համար Հոգեհանգիստ կատարեց, ուր և Տեսուչ Գեր. Տ. Գրիգոր Արքազան Եպիսկոպոս Աղափրեան մի սրտաշարժ ճառ ասաց:

Մենք տեսնումենք որ ամբողջ ազգը Ներսէս Պատրիարքի մահուան համար հոգոյ է հանում, և իրաւունք ունի. վստահ

Նախ՝ որ մեր շատ սովորութիւն գործողներից մի արժանաւորը պոսիատեց՝ երկրորդ՝ որ դեռ չամփռած ամենայն Հայոց Հայրապետի մահուամբ և Նորա հետեւանքն եղող վիշտը, այժմ մի կարեւոր ակտը ևս, որպիսին է Կ. Պօլսոյ Պատրիարքական ակտը, թափուր մնաց, երրորդ՝ որ ի դէմս Ներսէսի ազգը կորցրեց փորձառու, գործունեայ, շնորհալի, պերճախօս և գրագէտ պաշտօնեայ, որին փոխարինելու համար եթէ կան էլ մարդիկ, գտնելն ու ի գործ հրաւիրելն է գոյաւորին:

Ներսէս պատրիարք իւր գործունէութեամբ մեզ ժամանակակից և մեր տէրի առաջն էր և մենք Նորա մէջ տեսնումէինք Նորա տաճարամեայ պատրիարքութեան փորձառութեան հաւատարմը, արժանաւոր գործողի և իւր անձն թէ՛ ժողովրդին և թէ՛ երկրի վեհապետին սիրելի կացուցանողի յատկութիւնը: Սորա մէջ տեսնումէինք ժամանակի ոգուն հետեւողի և իւր ազգի բարօրութեան համար՝ պատահած հանգամանքից օգուտ քաղողի տախտակեան, պերճախօս քարոզչի, ոգևորող ատենաբանի և աստուածաբան մատենագրի յատկութիւնը:

Ներկայ համարիս մէջ ամփոփուած ձեմարանի Սրբազան Տեսչի ձառը, Ներսէս պատրիարքի յուզարկաւորութեան հանգիսի նկարագրութիւնը և ամեն սրտից արտայայտվող վշտակրութիւն ցոյց են տալիս Նորա անհուն ժողովրդականութիւնը:

Նորա պատրիարք ընտրուելիս ասած ատենաբանութիւնը ցոյց է տալիս այն բոլոր յատկութիւնները՝ որ պէտք են մի ատենաբանի իւր անձը սիրելի կացուցանելու ունկնդիրներին, համոզելու և իւր մտքի և անձի հետ սիրով կապելու: Նորա վերջին հրաժարագիրը ցոյց է տալիս մի շնորհակալու սրտի կատարելութիւնը, որ նախ քան գործից հրաժարուիլը հարկ անհրաժեշտ է համարում յայտնել իւր երախտագիտական գոհութիւնը դէսլի այն ամեն մարդիկ և շրջանները որոց հետը և մէջը գործելու առիթ է ունեցել: Նորա քառածալ, բացի «Կանխաբանութիւն» վերնագրով խորին ուշադրութեամբ վերծանելի 21 երես յառաջաբանից 733 երեսից բաղկացած «Աւսումն համարաբան Աւետարանի» կոչեցեալ 1875 թ. Արմաշում տպած գիրքը առ հաւատոյեայ է Նորա, իւր կոչմանը համապատասխան մատենագիր լինելուն:

Իբրեւ յարացոյց Ներսէսի մահուամբ տղգի զգտած վշտի՝ զընենք այստեղ Մայր Աթոռոյս ձեռնարանի Արքազան Տեսչի ճառը՝ որ Նորին Արքազնութիւնը տկարութեան պատճառով գրաւոր խորդաց:

ՄԵԾ. ՊԱՇՏՅՈՒՆԱԿԵՑՔ ԻՄ ԵՒ ԱՇԱԿԱՐՏՔ ՍԻՐԵԼԻՔ.

Երբեմն հրէից նշանաւոր թագաւորն Դաւիթ ասումէր ժողովրդեան թէ՝ զիտէ՞ք այսօր մեծ զօրավարն Իսրայիլի պապեցաւ մեր միւից ու ասաց Նոցա. հանգերձներդ պատուեցէ՛ր, քարձ հագէ՛ք. ինքն էս նորա դագաղի ետեւիցն էր գնում. և երբ որ հողոյ աւանդեցին նորա անշնչացած մարմինն, ձայնը բարձրացրեց ու լացեց նորա գերեզմանի վերայ, թողում ասել որ՝ իրան մխիթարելու համար՝ հրաւէր արին հացկերութի՛ւն և այն ևս չընդունեց, երդուելով որ մինչև երեկոյ չմի բան բերանը զնելու չէ: Այս բանն ասաց մի նշանաւոր թագաւոր մարդ, մի ժողովրդեան մէջ, որ իրանով բարօրեալ վիճակումն էր, մի երկրում, որ ծաղկեալ գրութեան մէջ էր գտնվում, նորա ասած խօսքերից մենք հասկանումենք թէ՝ ինչ նշանակութիւն ունի՝ նաև ծաղկեալ վիճակի մէջ գտնվող մի տէրութեան, մի ազգի համար՝ նշանաւոր մարդն՝ և թէ սրչափ սակաւաթիւ էին այդպիսի մարդիկ, որ այդչափ զգալի էր Արեւնեք զօրավարի մահն թէ՛ թագաւորի և թէ ազգին համար: Այս սակաւաթիւ են այն մարդիկն, որ մի տէրութեան, մի ազգի պատիւ և պարծանք կարող են լինել կամ բերել, որ մի տէրութեան՝ կամ մի ազգի յառաջագիւժութեան, բարօրութեան պատճառ կարող են լինել: Սակաւաթիւ են, ասացի, այդպիսի մարդիկ նաև այն կողմանէ, որ կան մարդիկ, որոնք ձգտում են նշանաւոր լինել աւելի իւրեանց փառասիրութեան, ընչասիրութեան յագուրդ տալու համար, քան թէ իսկապէս անձնուիրաբար ծառայելու մի երկրի, մի ազգի բարօրութեանն, նորա բարին յառաջացնելու համար, կամ ցաւակից լինելու նորա ցաւոց, պաշտպան հանդիսանալով նեղութեանց ու անբաղկութեան մէջ, իրօք և գործով մխիթարութիւն և անդորրութիւն բերելով ազգին ու երկրին՝ իբրև նորա հարազատ և կարեկից բարեկամքը: Սրչափ նշանաւոր մարդիկ իւրեանց ճանապարհից խոտորել են՝ գանձու, կալուածի, մեծութեան ու կրից պատճառաւ:

Համեմատելով մեր ազգի դարաւոր վիճակն ու զրուժվելը Դաւիթ թագաւորութեան երկար ժամանակամիջոցում հրէից ազգի օրերուն հետ, ակամայ յիշումենք մեծ ցաւով սրտի այն խօսքերն, որ ասաց երբեմն մեր քերթողահայրն Մովսէս Խորենացի, սուգ առնելով մեր երկրի ազգի և եկեղեցւոյ վերայ. «Բարձաւ թագաւոր և քահանայ, վրդովեցաւ խաղաղութիւն. . . » Մենք իբրև երեք տէրութեանց մէջ գտնուած ազգ, թէև մեծ երազներ չտեսնենք մեզ համար, բայց և այն-

պէս պիտի ցանկանք և արժանանանք մեր մարդկային իրաւունքները վայելել՝ մանաւանդ իրրեւ հարազատ և հաւատարիմ հպատակք այն տէրութեան, որոյ հովանաւորութեան տակ գտնվում ենք:

Բայց այդպէս էր արդեօք տաճկահպատակ մեր արինակից եղբարց վիճակը մինչև վերջին պատերազմը, թողումեմ պատմութեան. միայն այսքանս ասեմ, որ մի զօրաւոր պաշտպանի էր կարօտում տաճկահպատակ հայն և ահա պարզեց նորան Աստուած Ներսէս Պատրիարքն, Դա իւր ազգասիրական վսեմ և բազմակնջիւն պաշտամանը մէջ իրրեւ Պատրիարք Կ. Պօլսոյ ի փորձոյ լաւ հասկացաւ թէ՛ իւր հայրական ինամոց յանձնուած Հայոց ազգը Աւհափառ Սուլթանի ինամքն ու շնորհը պիտի վայելէ իրրեւ խաղաղասէր մի ժողովուրդ, իրրեւ մի հնազանդ, հաւատարիմ ազգ, և իւր իմաստութեամբն ու քաղաքագիտութեամբ իմացաւ օգուտ քաղել պատեհ ժամանակից: Սան Ստեփանոյի 16րդ յօդուածը յաջողեցաւ 61րդ յօդուած դարձնել եւրոպական պետութեանց վեհաժողովի մէջ, յորում վճռուեցաւ, որ Հայոց և Հայաստանի վիճակը ըստ իրար հայտարարութեանց հսկողութեամբ, Թէ Ամեն, Ներսէս Պատրիարքն շատ տարիների մէջ իւր իմաստութեամբն, հեռատեսութեամբ ու ազգագոյն, անշահասէր և անձնուէր գործունէութեամբ, հաղուագիւտ պերճախօսութեամբ, լեզուագիտութեամբ և եկեղեցական կարգաց և կանոնաց հմտութեամբ՝ քանի գնումէր, ժողովրդականութիւն ստանում ազգի մէջ, իւր ամենամեծ գործն եղաւ հայոց ազգը ոչ միայն ծանօթացնել եւրոպական պետութեանց, այլ և նորա արդար իրաւանց պաշտպան հանդիսացնել նոցա Բերլինի վեհաժողովի մէջ, որով և նորա ժողովրդականութիւնը բոլոր ազգէս ճանաչուեցաւ, և ամենայն տեղ այնչափ մեծացաւ մեր Հայ ազգի սէրն ու մեծարանքը դէպի նա, որ միաձայն և միահոգի նորան կաթուղիկոս ընտրեցին, նորա քանիցս հրաժարուելն անգամ առ տկարութեան չընդունելով: Բարեբաղդ կրկինէր մեր ազգն, որ այնպիսի արժանաւոր ժառանգ ունենար Ս. Լուսաւորչի հայրապետական աթոռոյն. բայց արդեօք մեք անարժան էինք այնպիսի հայրապետ ունենալու, չգիտեմ, և միանգամայն թողնելով նորա շատ և շատ լաւ կողմերն պատմել, նորա տեսակ տեսակ արժանաւորութիւնների վերայ խօսել, այսքանս կասեմ միայն հրէից Դաւիթ թագաւորի նման թէ՛ գիտէք՝ ինչ մարդկայակեցաւ մեր միջից, ինչ կորուցինք մենք. Ներսէս մեռաւ . . . կասեմ Դաւիթ նման թէ՛ սուգ առէք՝ հայոց ժողովուրդ, սղայ թող հայաստանեայց սուրբ եկեղեցին, կասեմ մեր քերթողահայր Մովսէս Խորենացւոյ հետ թէ՛ ողբամ զքեզ՝ Հայոց աշխարհ, ողորմիմ քեզ՝ եկեղեցի Հայաստանեայց ի քաջէն զրկեալ հովուէ և հովուապետէ: Եթէ մի զօրաւոր թագաւոր-կողբար քաջ զօրավարի անակնկալ կորուստն, մի՞թէ մեք մեր վիճակին մէջ չպիտի ողբանք այնպիսի մի մեծ անձի անակնկալ մահն, որոյ կորուստն մեզ համար անփոխարինելի է: Այո՛, որտանց

ցաւումներ և պիտի ցաւենք երկար ժամանակ այդպիսի մի կորստեան համար։ Բայց մեր ողբ ու լացը և մեր սրտի ցաւն այն ժամանակ նշանակութիւն կունենան, երբ որ մեք գնահատենք այդպիսի հազուադիւս անձինքը թէ ի կենդանութեան և թէ զկնի մահուան, որ մեզ համար նոքա անմահ լինին իւրեանց գործերովն, որ մեք այդպիսի անձանց կեանքը մեզ օրինակ առնուենք, մեք ևս ազգի արժանաւոր, անձնուէր ու անշահասէր մշակներն ու պաշտպանները ջանանք լինել, այն ժամանակ ներսէսների պէս անձինքը մեր մէջը կը կենդանանան, կապրին, կգործեն մինչև մեր մահն՝ ազգի և եկեղեցւոյ համար։ Օրհնեալ լինի յիշատակը ի Տէր հանգուցեալ ներսիս՝ ընարեալ կաթուղիկոսի ամենայն ազգիս և Պատրիարքին Կ. Պօլսոյ։ յիշատակ արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն։

Տեսուչ Ճեմարանի

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ.

«Յաւերժայիշատակ ներսէս Պատրիարքի ատենախօսական ճարտարութեան իբրև մի օրինակ Արմաշու Զարխափան Ս. Աստուածածնի վանքում՝ հրատարակուող Յոյս ամսաթերթի 1874 թ. Ապրիլ ամսատետրից արտատուում ենք ամսագրի հետեւեալ յառաջաբանը և կից Տ. ներսէս Պատրիարքի ատենաբանութիւնը։

Սոյն ուշադրութեան արժանի գրուածքը՝ զոր Սահմանադրական ուխտը կատարելէն յառաջ ընթերցած է Ամեն. Տէր ներսէս Պատրիարք Սրբազանը յատենի Ընդհանուր Ժողովոյ ի ներկայութեան բաղմութեան ունկնդրաց, մեք ևս արժան կհամարինք Ամսագրիս մէջ հրատարակել՝ իբրև նիւթ արժանի ուշադրութեան եւ հետաքրքրութեան ազգի օգտին փափագող և անոր վրայ խորհող և խօսող ազգայնոց։

Տեաքք Երեսփոխանք Հայոց Ազգին։

Այսօր կուգամ իմ խորին շնորհակալութիւնս յայտնել Ձեզ՝ որ ներկայացուցիչն էր Տաճկաստան աշխարհիս Հայ ազգին, այն անարգամեծար ընտրութեան համար՝ որով զնուաստս բարձրացուցիք ի Պատրիարքութիւն Հայոց։

Ես նկատելով իմ անարժանութիւնն, անբաւականութիւնն, իմ անձին տկարութիւնը, կանխաւ գրով աղաչեմ էի զՁեզ, որ զիս ընտրելեաց ցանկէն հանէք, և անցեալ օր երբ լսեցի զիս ընտրելիդ, հաստատապէս որոշեցի որ իջնեմ և պատկառելի Ժողովոյդ շնորհապարտութիւնս յայտնելէս յետոյ՝ աղաչեմ որ հրաժարականս ընդունելու շնորհք

ընէք. սակայն Երեսփոխան Տեարք չթողին և յայտարարեցին թէ, այսպիսի ընդհանուր համակրութեան առջև հրաժարիլն, ազգն ոտնակոխ ընել է: Կըզարհուրիմ՝ այս յայտարարութենէն և իմ ներքին համոզմամբս կ'սկսեմ՝ թէ բարձր պաշտօն չընդունելով՝ խոնարհագոյն պաշտամանց յանձնառութիւն յայտնելն ազգին դէմ թշնամանք ընել չէ. բաց ի վարդապետութենէս՝ ամեն պաշտօնի և աստիճաններու ցարգ ազգայնոց ստիպմամբն արժանացած եմ. ես բնաւ պաշտօնի, բարձի հետամուտ չեմ եղած. եթէ կատարելապէս առողջ ատեններս ինձ յանձնուած գործերն ազգը գոհացնելու աստիճան գլուխ հանել չեմ կարողացած՝ որչափ եւս առաւել այժմ՝ այս տկարութեան երկիւղին մէջ, ոչ առ համեստութեան այլ վասն ճշմարտութեան ահա հրապարակաւ կ'այտնեմ, որ իմ անձինս վրայ բնաւ համարում չունիմ. չըլլայ որ այս խօսքերս յուսահատութեան յայտարար համարուին. յուսահատութիւնն թէ հոգեւորապէս և թէ քաղաքականապէս գիտեմ որ աններելի է. քան զիս բազումք են արժանաւորագոյնք, թերեւս փափագողներ ալ գտնուին, ընտրեցէք անոնցմէ մին, և ես յօժարակամ կըծառայեմ ազգին ընդ նորա իշխանութեամբ, զի փափազն ի գործ կը մղէ:

Արդ՝ ներեցէք ինձ, Տեարք, որ այս անկեղծ յայտարարութեան հետ քանի մը խօսք ալ ընեմ այս պատկառելի ժողովոյն մէջ մի միայն յազգասիրութեանէ թերադրեալ. Դուք զո՞վ որ ալ ընտրէք Պատրիարք, ես կը վախճամ որ վերջին տարիներու Գահակալութենուն վիճակը կունենայ, Պատրիարք ընտրուելէն քանի մը ամիս յետոյ՝ նախ ժողովուրդին աչքէն և ապա աթոռէն կիշնայ. այս յաճախ անկման պատճառ պատրիարքներու և մի միայն իրենց պակասութիւններն չեն, չեմ ուրան սր որ անոնք ալ սխալներ կ'գործեն, բայց ես և մեզմէ շատերը թերեւս փնտուելով ուրիշ պատճառներ կ'գտնեմք:

Հատեր կըսեն թէ պատրիարքներու անկման պատճառն ազգային Սահմանադրութիւնն է. ասոր չեմ համոզուած. ասկէ 14 տարի առաջ հին պատրիարքներու ունեցած մեծ իշխանութեան՝ չափ սահման դնելու և մեր Օսմանեան կառավարութենէն վաւերացեալ կամ շնորհեալ առանձնաշնորհութեանց կանոնաւորապէս վայելմանց համար՝ ազգը գեղեցիկ խորհրդով Սահմանադրութիւն մը խմբագրեց, բոլոր Հայերը խայտացին ցնծութեամբ և օտարք գովեցին զմեզ:

Ազովեմ ազգին աշխատութիւնը՝ որոյ վաստակակից իսկ գտնուած եմ, եւ կը հիանամ այս կանոնաւորութեան մէջ՝ մտնել փափաքելուն վրայ, զոր մինչեւ անգամ՝ շատ համարեցան մեզ այն ատեն, և ըսին թէ Հայոց ազգին Սահմանադրութիւն տալն տղայոց ձեռք ծանրագին այլ դիւրաբեկ գործի մը տալու կնիմանի. սակայն ազգը միաձայն հաւանութեամբ ընկալաւ զայն. կ'ըսեմ որ եկեղեցական պատգամաւորութիւնը՝ որոյ թարգմանն էի, որ մը 12 տարի յառաջ ըսաւ՝ թէ ազգը

առանց Սահմանադրութեան չէ կտրող կառավարուիլ. Պատրիարքներ ալ եկան և ըսին՝ թէ իրենց կողմնացոյցն է Սահմանադրութիւնը, և իրաւունք ալ ունենին. ուստի չենք կրնար հիմալ ըսել թէ պատրիարքներու անկման պատճառն ազգային Սահմանադրութիւնն է. այսպէս ըսելով հակասութեան մէջ կիյնամք:

Ի՞նչ է ուրեմն պատճառ պատրիարքներու անկման. Ինչ կ'ընէ թէ առաջին պատճառն ամեն ազգային անհատի իւր իրաւունքներն ու պարտիքն չճանաչելն և չգործադրելն է. Այսօր ընտրութիւն կ'ըլլայ, թաղ մը 500 ընտրող ունի, 50 կամ ուելի պակաս քուէ կ'ըրկէ, և 450ը անտարբեր և անմասն կ'մնայ, բայց ընտրեալք ըստ օրինի կ'վաւերանան. Ի վերջէ կ'ենեն զգոհութիւն կ'այայտեն ընտրելոց դէմ, ընտրեալք ինքզինքնին կ'աշտապանեն, կ'մաքառին. ինչպէս ընտրողութեան՝ այսպէս ուրիշ նուիրական իրաւանց և պարտեաց մէջ անհոգութիւն և անտարբերութիւն և իրարու դէմ արհամարհանք ցոյց տալով՝ նոյն հետայն կ'ծագին կ'ազ, կ'ուր, անհամաձայնութիւն երկպառակութիւն, և ապա ի վերջ բանի Սահմանադրութեան վրայ կ'ծգուի յանցանքը. Այսպէս պատկէն մեծնալով՝ խռովութիւններն կ'զայրանան, և Պատրիարք և Ժողովք կ'իյնան, ուստի ազգին խռովութեան և Պատրիարքներու անկման պատճառ ազգային Սահմանադրութիւնը չէ, այլ ազգայնոց նոյն Սահմանադրութեան համաձայն իրենց իրաւունք և պարտիքը չկատարելն է. Մենք ուղեցինք Սահմանադրութիւնը և միշտ ըստ այնմ վարուելու աշխատելու եմք. եթէ ներկայ Սահմանադրութեան մէջ անգործադրելի կէտեր կ'գտնուին, մենք Սահմանադրութեան հետ՝ վերաքննելու արտօնութիւնն ալ ունիմք շնորհիւ Օսմանեան Տէրութեան, ուստի Սահմանադրութիւնն ալ վերաքննութիւնն ալ մերն է. ասոնց դէմ գանգատիլ մենք մեզի դէմ՝ ելնել ըսել է, և փոխանակ մեր զգոհութիւններն յառաջ տանելու, աշխատինք Սահմանադրութիւնը մեր Ժողովուրդին կեանքին մէջ մտցնելու և խոհեմութեամբ վարուելու. Սահմանադրութիւնը չհասկանալով չսիրողներու դէմ, որպէս զի չխրաչին. Ծայրայեղութիւններէ պէտք է զգուշանալ:

Երկրորդ և գլխաւոր պատճառ այն է, որ Հայոց ազգը կ'հաստատայ թէ ներկայ պատրիարքութիւնն ալ հնոյն յար և նմանն է, և 16 տարուան փորձով զիտեմք որ հին պատրիարքութիւնն չէ մնացած. ազգը կակնակալէ, Պատրիարքը չկրնար գոհ ընել ազգին փափագը. Այսօր իւր միջնորդութիւնն և երաշխաւորութիւնն իսկ յերկապս կտատանի. Հայոց ազգը Պատրիարքի իշխանութիւնը սահմանադրած ատեն՝ նոյն իշխանութեան գոյութեան վրայ գոգցես չէ մտածեր. զօրաւորին՝ չափ, կանոն, սահման, կապ զրինք, զի զօրաւոր էր. իսկ երբ անզօր է, երբ միմիայն անուընդ մնացած է գրեթէ առանց ազգեցութեան, և ասոր ապացոյց՝ մէկ ազաղակաւ կ'իյնայ Պատրիարք մը, ի՞նչ ընէ Պատրիարքը, թող սահմանադրապէս ընթանայ. բայց քանի որ Պատրիարքութիւն

չէ մնացած՝ ի՞նչ ընէ, ցըցուցէք Պատրիարքութիւնը և թող գործէ:

Այս տխուր վիճակին պատճառներն բաց ի սոցանէ ուրիշ չատեր ալ կրնան լինիլ, բայց ինչ որ ալ ըլլան թէ՛ Օսմանեան Վայսերութեան և թէ՛ Ազգին օգուտն ու շահը կ'պահանջեն՝ որ պատրիարքութիւնը դոյանայ, կենդանանայ պատշաճապէս. երբ կտեսնեմք որ պատմութիւնը Կ. Պօլսոյ Հայ Պատրիարքաց թէ՛ Օսմանեան Տէրութեան և թէ՛ Հայոց ազգին մատուցած անհամար ծառայութիւններն անմահացուցած է, գօտեւորելու եմք իւրաքանչիւրս մեր պարտիքը կատարելու՝ այն վստահ համոզմամբ՝ թէ Օսմանեան Տէրութեան և անոր դարաւոր հպատակ հաւատարիմ Հայոց ազգին ճշմարիտ օգտին համար պիտի աշխատինք: Արեւմտի ի բաց քեցենք մեր սրտերէն այն ամեն բաներն՝ որ խռնդոտն են գործելու. անմիաբանութիւն, ատելութիւն, անտարբերութիւն, վհատութիւն, աննպատակ կուսակցութիւն, քամահանք, խճրճանք, և այլն: Զօրանանք գործելու համար առանց իրարու գլխու վրայ Տամոկլեան սուր կախելու. զօրութիւնը միութեան մէջն է, և միութիւնը պահպանող քրիստոնէական սէրն է, որ մեր հաւատքին գործնականն է. և քի որ կ'հաւատայ հոգւով՝ կսիրէ, այսինքն կ'գործէ սրտով, և ով որ կ'գործէ, նա միայն իրաւունք ունի յուսալու. միանանք սիրոյ գրօշին ներքեւ: Առանց կուսակցութեան ազգ չկայ. բայց լուսաւորեալ ազգաց մէջ ազգին բուն օգուտն իրենց նպատակ բռնած են. վայրապար վէճերէ հեռի մնալու ենք, կիրքերն ի բաց թողելու ենք, բոլոր եօտութիւնները միակ Նսին այսինքն ազգին վրայ միանալու են, սիրոյ շրջանակին մէջ ամեն մարդ մեծ և միանգամայն պզտիկ է. վիճաբանութիւնք լուսով կը յազդին, կիրքերը բոցով, կըրքերը բաժանման խրամատներ կ'բանան, և որչափ սաստկանայ՝ այնչափ խորին կը պեղեն զանոնք, և միութիւնը անհնար կ'գործեն: Իրարու դէմ թափած ճիգերն իս ազգին համար թափենք, մոռնանք անցեալն և նոր ոգւով կազդուրինք:

Դաստիարակեմք մեր մանկունքն և ջանանք որ մեր ազգային հին համբաւն անաղարտ մնայ, բարձրացնենք ազգային բարոյականութիւնը, որով միայն կարող կ'ըլլանք Տէրութեան և օտարաց համարումն գրաւել, Ըսեր են երբեմն, Հայը վաճառական է, բայց ոչ խղճմտանքի: Հայերը հինգ հարիւր տարի յառաջ Ներսիս Բնակոյ ազգի մը վաճառականութիւն, հաշուեկալութիւն՝ և երկրագործութիւն սովորեցուցած են. կրթենք մեր զաւակները Աստուածապաշտութեան և ուսմանց մէջ, թող խրատուի ան հայրը որ ցոփ է, արբեցող է, ծղլ է, ընտանեակէր և որդեակէր չէ, և զրկուի ամեն իրաւունքներէ այն մարդը՝ որ Հայ է ու ազգը չսիրեր, զաւակներ ունի և — զանոնք զպրօց չզրկեր, զպրօց ունի և հոգ չտանիր անոր, եկեղեցի ունի և անհաւատարիմ է անոր: Ազգին բարիք ընողներուն երախտապարտ գտնուինք, որպէս զի բարեբարներն ունենանք միշտ, միանանք հղբարք, աջ ու ձախը թողունք

և մեր միութեան բուն կեդրոնին՝ սրտին դիմենք, այսինքն Հայաստանեայց ամենասուրբ Եկեղեցւոյ, մեր մաքուր Ծնողին ծոցը համախմբ բռնինք, մեր Եկեղեցւոյ բարգաւաճանաց կամ մեր յուսոյ խարսխին ամրութեան համար ամեն ջանք ի գործ դնենք. մեր հոգևոր և մարմնաւոր երջանկութեան կարապետն մեր Եկեղեցին է, մեր Հարց առաքինութեանց և բարեպաշտութեան մէջ իւրաքանչիւր Հայ աշխատինք յառաջ երթալ, մեր եկեղեցականութիւնը բարձրացնենք և ազնուացնենք, զի անոնք մերն են և ոչ ուրիշին, զանոնք և բոլոր աղգին պաշտօնեաներն անուանարկելէ, անպատուելէ զգոյշ կենանք, համեստութիւնն մեր կենաց կանոնն լինի, և մեր ամեն բանի, մինչև իսկ տպագրական ազատութեան մէջ համեստութիւն փայլի. Ինչ կուսակցութեանց որ ծառայենք՝ եկեղեցւոյ կէտին վրայ միանանք, նման իրարմէ հեռացող ձիւղերու, որոց բունը մէկ ծառի վրայ է. ամենքս ալ եկեղեցւոյ կողմը, միութեան կողմը ըլլանք, ուստի եկեղեցին միութեան մէջ պահենք, բոլոր աթոռներն իրերապատշաճ ներդաշնակութեան մէջ դնենք, մեր աղաղակն ի խորոց սրտէ այս թող ըլլայ. յաւերժացի՝ միութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց, և նովաւ միաբանութիւն Աղգին:

Ջանանք ազգը ներկայացնող այս Ընդհանուր Ժողովը պատկառելի պահել, յարգենք մեր օգտին համար ընտրած մարդիկներն, զի անոնց պատիւը մերն է. եթէ մենք մեր Վաթուղիոսին, մեր Պատրիարքին, մեր առաջնորդներուն, մեր Ժողովներուն պատիւը չպահենք, օտարներէն զնոյն պահանջելու իրաւունքնիս կը կորսնցունենմք. ներքնապէս միութեամբ ղօրանանք, արտաքուստ պատկառելի և հզօր կըլլամք:

Այս միութեամբ կարող եմք մենք զմեզ ղեկավարել:

Թող աշխարհի ազգաց և ազանց ահագին նաւատորմին մէջ փոքրիկ նաւակ մը եղած լինի Հայոց ազգը, այսչափ դարերէ ի վեր այս նաւակը ռըչափ ալեաց յաղթեր և ցարդ չէ ընկղմեր՝ Աստուծոյ շնորհիւ և մեր Հարց իմաստուն ղեկավարութեամբ:

Ընտրեցէք Ձեր ղեկավարը, Ձեր Պատրիարքը, և Ժողովները, սակայն վստահութիւն ունեցէք վրան, նաւակը փոթորկի հանդիպած ատեն՝ ղեկավարն ձեր վստահութեամբ ղօրանայ, ահագին նաւերու մէջէ պիտի անցնի առանց անոնց զարնուելու, այն ատեն երբ ահագին ալիք կսպառնան և շղթայազերծ հողմունք, ի հիւսիսոյ ի հարաւոյ, յարեւելից և յարեւմտից, երբեք ծուփ կը տատանի, երբ նաւակին միջինները աղմուկով շփոթով և անիշխանական ցոյցերով ղեկավարը կը շփոթեն, դէկն անոր ձեռքէն կիշնայ, և նաւակն ամեն կողմէն փչած հովերուն կը մատնուի. Զի թէ ներքին թէ արտաքին դժուարութեանց միանգամայն յաղթել առանց վհատելու գրեթէ անկարելի է, և շատերն ձեռնթափ կ'լինին, և ամեն քիչ շատ մտածող մարդ կ'զոչէ:

Այս իմ գործս չէ, այլ քու գործդ է, ո՛վ ամենամեծ Աստուած, զի

գու միայն զիտես ի չարեաց անակնկալ բարիս հանել. Բու հզօր աջովդ գու առաջնորդէ այս նաւակին, Հայոց ազգին, զոր Հայաստանի սոսկալի ալեկոծութեանց մէջէն խալըսեցիր, և Յակոբայ աստղին լուսովը խաւարին անդեղոց և անբութեան գիշերաց մէջ, թէև վիրալից՝ անխորտակելի պահելով հասցուցիր մինչև ցարդ. վառ պահէ այդ Աստուածային լոյսը Հայոց ազգին ամեն առաջնորդներուն, այս պատկառելի Ժողովոյն, Եկեղեցւոյն Արարատեան Մայր Աթոռոյ գահակալ ամենայն Հայոց Հայրապետին և բոլոր բարձրաստիճան պաշտօնէից, աթոռակալաց, միաբանութեանց, եկեղեցականաց, ժողովականաց հոգւոյ մէջ, շնորհէ Բու սէրդ առ հասարակ ամեն հայու իրենց արենակից եղբարց համար, և ամեն կարգի անձինք սիրովդ յաջողին ամեն տեսակ առաքինութեանց մէջ՝ իւրաքանչիւրն իւր պարտքը մտադիւր կատարելով, որով իրաւունք ստանան ամենքն բերկրիլ երկրաւոր և երկնաւոր երջանկութեան յուսով. Ահա՛ այս են իմ իղձերս, զորս այս առթիւ ներկայացուցի Երեսփոխանական պատկառելի Ժողովոյդ:

Պատճէն վերջին հրաժարագրի.

Առ Վսեմ. Ատենապետ Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ.

Թղթոյս կից երեւիլի ըժշկաց վկայագրէն յայտնի է որ անկարելի է նուաստիս պատրիարքական պաշտօն վարել այսուհետև, ոչ գործնապէս և ոչ անուանապէս, զի արգելեալ է մտօք, սրտիւ յուզուիլ, խորհիլ, մտածել, կարգալ, գրել և այլն.

Արդ՝ խնդրեցի Ազգային վարչութեան Արօնական և քաղաքական Ժողովներէն որ նախ իմ երախտագիտական զգացումներս բարեհաճին գնել առ ռոս Գահայից Օգոստոսիառ Աւհապետին մերոյ՝ որ իմ երկարժամանակեայ պաշտմանս միջոցին զիս սփոփեց և մխիթարեց կայսերական անգին համակրութեամբ, շնորհօք և պատիւներով, և վերջերն իսկ Իւր անձնական ըժշկապետ Վսեմ. Մալքոնէնի փաշա երկիցս շրջեց՝ հիւանդութեանս վրայ ցաւ յայտնելով, որում թէ նուաստս և թէ սիրելի Ազգս տարակոյս չը կայ, որ հաւատարիմ եղած եմք և պիտի մնամք ց'իսպառ. Յետոյ բարեհաճին յայտնել իմ խորին շնորհակալութիւններս Բարձր. Մեծ. Եպարքոս լուսամիտ Սայիտ փաշային՝ որ քանիցս վշտակցութեամբ հարցափորձ ըրած, և ապա իւր կողմանէ բարձրաստիճան պաշտօնատար մը զրկած է՝ իւր կարեկցութիւնն յայտնելու. յայտնել նաև ներքին, Արտաքին և Գատական գործոց Բարձր. Նախարարներուն իմ շնորհակալութիւններս, և այն ամեն օտարազգի պաշտօնատեարց՝ որք քանի քանի անգամ յատուկ պտտուաւոր պաշտօնատարներ զրկեցին տեղեկանալու համար հիւանդութեանս մասին.

Ապա խնդրեցի նա ևս հաղորդել իմ շնորհակալիքս Յունաց պատ. Ազգին այժմու և նախկին Ամեն. Սրբազան պատրիարքաց, Ս. Սինօղին

և Պատրիարքարանին, Վսեմափայլ Քարածէօտօրի փաշային, Ազնու-
փայլ Տիկին Ժորժ Զարիֆին, Հոռմէական և Բողոքական ազգայնոց,
և մասնաւորապէս Ազարեան Գերերջանիկ Ս. Կաթուղիկոսին և Պուլիա-
րաց Ամեն. Էկզարքին, Ասորւոց Գեր. Գիտնէսիոս Եպիսկոպոսին, ինչ-
պէս նաև Հրէից Գեր. Խախաժաղխին, և Վսեմ. Կոմս Քամանտային՝ որ
չը մոռացան զիս բնաւ, և որք կամ անձամբ այցելեցին և կամ իրենց
կողմանէ եկեղեցականներ, պաշտօնատարներ, մինչև իսկ ճարտար քը-
ժիշկներ զրկեցին:

Նաևս բարեհաճին յայտնել իմ յաւիտենական անսահման շնորհա-
կալութիւնս զիս դարձանող ճարտար բժշկաց բաց ի իմ վաղնջուց և
բազմերախտ բժիշկներէս Տաթմոր Աերվիշէն Էֆէնտի և Տաթմոր Փէշտի-
մալճեան Էֆէնտի, և մասնագէտ ակնաբոյժ Տաթմոր Աճէմեան Էֆէնտի,
որոց անձնութիւններ, սէրը, գութը և անդու խնամքները չը պիտի
մոռնամ յաւիտեան, յանձնու շնորհապարտ կը մնամ Տաթմոր Աղա-
սեան, Տաթմոր Աւիլեան պէյ, Տաթմոր Խորասանճեան, Տաթմոր Շիշմա-
նեան, Տաթմոր Ծաննի, Տաթմոր Ստեփան փաշա Ասլանեան, Տաթմոր
Մազէ, Տաթմոր Մօրթման, Տաթմոր Միւհլիբ, Տաթմոր Բօլաբ Բէյ,
Տաթմոր Լէֆթէր փաշա, Տաթմոր Յակոբ պէյ Խանտանեան, Տաթմոր
Քիրեաքու, Տաթմոր Հիւնքիարպէյէնեան, Տաթմոր Օրմանեան եղբարք,
Տաթմոր Քալստեան, Տաթմոր Մինասեան Էֆէնտիներու:

Իսկ Մեծ. Տաթմոր Զամաքոյի մարդասիրութիւնը և խնամքը անմո-
ռանալի բարերարութիւն մ' է և արժանի յաւերժական շնորհակալեաց:

Իսկ գութ, բարեհաճեցէք յայտնել իմ անսահման շնորհակալու-
թիւններս, մանաւանդ առ Հայոց սիրեցեալ Ազնւ. առ պատկառելի Ազ-
գային Ժողովն, առ ամենայն Ժողովս և Խորհուրդս, առ ամենայն պա-
տուական եկեղեցական և աշխարհական թէ՛ ժայրաքաղաքիս և թէ՛
գաւառաց՝ որք իրենց ցաւակցութիւնն և կարեկցութիւնն ցուցին այցե-
լութեամբ, հեռադրութեամբ, և գլխաւորապէս առ Աստուած, առ
Տէրն Մազու և Կենաց՝ ջերմ աղօթիք, Իմ զգացումներս բացատրե-
լու ո՛չ կարողութիւն ունիմ, ո՛չ միջոց և ո՛չ խօսք: Աստուած Ինքն
հատուցանէ ամենեցուն վարձս բարեաց Իւր անհուն ողորմութեամբն:

Արդ՝ առանց նուաստիս երկար խօսելու և մտածելու հարկ թողլոյ՝
կը պաղատիմ որ, Ազգային Ժողովն անմիջապէս ընդունելով հրաժա-
րականս, ինձ յաջորդ մ' ընտրէ, որում ի սրտէ կարողութիւն և յա-
ջողութիւն կը մաղթեմ, Այս է կամք Տեառն, որ է և լիցի միշտ օրհ-
նեալ, Եթէ Աստուած ինձ կեանք շնորհէ, և եթէ յայտմ հետէ ապ-
րիմ, այն ալ միմիայն Օգոստափառ Այսսեր և սիրելի Ազգիս աղօթելու
համար յատկացեալ է:

Մնամ աղօթարար սիրելի և օրհնեալ Ազգիս

ՆԵՐՍԷԱ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Յաւերժայիշտտակ Հանգուցելոյն մատինագրական Հմտութեան իբրեւ մի ճաշակ՝ դնումենք այս տեղ նորա աշխատասիրած Համարարանի վերջաբանը, որ է

« Քրիստոնեայ, արդեօք և դու նման Յիսուսի կրցա՞ր անպարտակիր վերքեր և խոցեր ունենալ սիրոյ ասպարիղին մէջ՝ զոր Տէրը բացաւ քեզ, արդեօք տքնեցա՞ր քո և ընկերացդ հոգւոյ փրկութեան և մտաց լուսաւորութեան, արդեօք աշխատեցա՞ր մեղաց բարձման, անիրաւութեան ջնջուելուն, տգիտութեան խաւարին փարատելուն, թշուառները մխիթարելու և տառապելոց արտասուքը սրբելու, Եթէ զոհեցիր ժամանակդ, ինքդ, մտաւոր և մարմնաւոր կարողութիւնդ՝ և կեանքդ՝ առաքինութեան, լուսոյ, սիրոյ, հաւատոյ և յուսոյ թագաւորութեան անկեղծութեամբ և անձնուիրութեամբ՝ առանց երկրաւոր շահասիրութեան՝ դու Քրիստոսի զինուոր ես՝ դու Քրիստոսի պէս վերամարտիկ յաղթական մ, ես. քո թափած քրտունքը, քո հոսած արիւնդ, քո ստացած վերքերդ՝ քո փառքն են, փառաց թագաւորին պէս:

Ուրախ լեր յաւիտեանս,

Մուտ յուրախութիւն Տեառն քո » :

Ով յաւերժացեալ Հոգի, « քո թափած քրտունքդ, քո հոսած արիւնդ, քո ստացած վերքերդ՝ քո փառքն են փառաց թագաւորին պէս:

Իսկ մենք խոնարհելով անմահ յիշատակիդ առաջ՝ կալօթենք առ Աստուած՝ որ նա ի տրիաուր բխր ջանիցդ ասէ,

« Ուրախ լեր յաւիտեան

Մուտ յուրախութիւն Տեառն քո » :

ՀԱՆԳԻՒՄ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՆԵՐՍԷՍԻ

ՀԱՆԳՈՒՅԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Մեծահանգէս արարողութեամբ և տխրալից շքեղութեամբ կատարեցու երէկ Գում Գաիտի Պատրիարքական Մայր-Եկեղեցւոյն մէջ պաշտօն հոգեհանգստեան և յուղարկաւորութեան Տեառն